

Ռուբեն Մելիքյան

Մեռը՝ արական

Տարիքը՝ 25-40

Ընդհանուր աշխատանքային ստաժը՝ 15 /բոլորը մասնագիտական/

Օրենսդրական բացերը լուծելու փորձ կատարվել է քրեական դատավարության օրենսգրքի նախագծով, որտեղ նախատեսված էին հետևյալ դրույթները.

Առաջինը, որ հնարավոր չէ, որ մեկից ավելի խափանման միջոց կիրառել, օրինակ՝ գրավ և ստորագրություն չհեռանալու մասին և երաշխավորություն: Այսինքն՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը: Դրանցից միայն մեկը կարող է կիրառվել: Սա մեկ օրենսդրական խոչընդոտ: Եթե դատարանը ունի տարբերակ միայն մեկը կիրառելու, կալանք և մեկ այլ խափանման միջոց, ապա ավելի հակված է կիրառելու մեկը՝ կալանք: Եվ եթե ունենար կիրառելու մեկից ավելի այլընտրանքային խափանման միջոց կիրառելու, գուցե այդ փաթեթը կիրառեր: Ոչ թե գուցե, այլ դա ավելի օբյեկտիվ է, դա երկրների փորձից է ելնում: Սա մեկ:

Երկրորդ՝ կարծում եմ՝ նույն նախագծով նաև այդ հարցն է լուծված, որ հնարավորություն է ընձեռվում, որ որոշակի խափանման միջոցներ կիրառել ոչ թե դատարանի, այլ հենց վարույթն իրականացնող մարմնի, օրինակ, դրա մի տեսակն է գրավը: Օրինակ՝ այսօրվա օրենսդրությամբ, եթե վարույթն իրականացնող մարմինը գտնում է, որ գրավը բավարար երաշխիք է անձի պատշաճ վարքագիծը ապահովելու համար, ապա նա պետք է կալանքի միջնորդություն անի դատարան, դատարանը կալանքի որոշում կայացնի, հետո նոր մյուս կողմը գրավի միջնորդություն ներկայացնի իր հերթին և դատարանը որոշի՝ դա թույլատրելի՞ է, թե՞ ոչ:

Ես տեղյակ եմ նաև դեպքերից, երբ վարույթն իրականացնող մարմինը դեմ չէր լինի ի սկզբանե գրավը կիրառել որպես խափանման միջոց, բայց դատարանը գտել է, որ, չէ՛,

կալանքը պետք է կիրառվի և այն չի կարող փոխարինվել այլ մջոցով: Գրավի ինքնուրույնությունը պետք է ընդգծվի և գրավը պետք է ինքնուրույն խափանման միջոց լինի՝ կիրառվելով նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից: Դա ևս քրեական դատավարության օրենսգրքի նախագծով նախատեսված էր: Էս երկուսը նշեմ:

Երրորդը՝ նույն նախագծով նախատեսված է նաև ավելի շատ լուրջ այլընտրանքային խափանման միջոցներ, որ նախատեսված են այսօր՝ տնային կալանք և վարչական վերահսկողություն տեխնիկական միջոցների կրառմամբ: Հաճախ են հանդիպում դեպքեր, երբ դատարանները գտնում են, որ կալանքը մի քիչ ավելի շատ է կիրառվել, ավելի ճիշտ կիրառվի, եթե մի քիչ ավելի լուրջ երաշխիք լինի: Դրանցից մեկը կարող է լինել վարչական վերահսկողությունը, տնային կալանքը, այսինքն՝ տեխնիկական սարքերի միջոցով, վարչական հսկողություն, վերահսկողությունը չէ, տեխնիկական սարքերի միջոցով անձի տեղաշարժին հետևելը: Այդպիսի գործիքներ, եթե մեր օրենսդրությամբ նախատեսվեն և ստեղծվեն ենթակառուցվածքներ, այսինքն՝ սարքերի համակարգը, դրանց սպասարկումը, որակյալ անձնակազմ, մեր խնդիրների մեծ մասը կլուծվի: Նույնիսկ սա կարելի է համարել առաջին խնդիր, հետո մյուս երկուսը: Էդ նույնը վարչականին է վերաբերում: Վարչական հսկողությունը, նախագծում տեղ գտած և բավականին երկար քննարկված աշխատանքային խմբի կողմից, որի անդամ նաև ես եմ, երկար քննարկված միջոց է: Միջազգային գործընկերների շնորհիվ մենք կարողացել ենք ծանոթանալ փորձի թե՛ Եվրոպայում, թե՛ Միացյալ Նահանգներում, և կարծում եմ, այս միջոցը մեծ հաջողություն կարող է Հայաստանում ունենալ, եթե ենթակառուցվածքներ ապահովվեն: Դատարաններն էլ պետք է կարողանան յուրաքանչյուր դեպքում, անգլերեն ասած, *tailored approach*, դեպքի առանձնահատկություններից ելնելով, մոտեցումներ դրսևորել, թե կոնկրետ դեպքում ի՞նչ արգելքներ դնեն անձի վրա: Օրինակ՝ դա կարող է լինել ինչ -որ ժամի տնից դուրս չգալը, ինչ-որ վայրեր երբեք չայցելելը, ինչ-որ մարդկանց հետ չշփվելը: Այդ բոլորը, կարծում եմ, կիրառման ընթացքում ավելի կկոնկրետացվեն, որովհետև դա վարչական

հսկողություն է, ի տարբերություն մյուս խափանման միջոցների, շատ ավելի առանձնահատուկ է և կապված է գործի փաստերի հետ: Ավելի գործուն, տնային կալանքի համեմատ, կոժվարանայի ասել: Տնային կալանքը ավելի մեծ սահմանափակումներ է նախատեսում, բայց վարչական հսկողությունը հնարավորություն է տալիս անգամ տնային կալանք չկիրառել այն դեպքում, երբ պետության խնդիրն է, օրինակ, այդ մարդը ինչ-որ տարածքում չհայտնվի, ինչ-որ ժամի տնից դուրս չգա: Բայց տնային կալանքի դեպքում առհասարակ արգելք է դրված, իսկ անձի ազատության շահը նայելով՝ անձը կարող է նաև հնարավորություն ունենա ցերեկային ժամերին նաև տանից բացակայել, ինչ-որ տարածք գնալ, աշխատանքի գնալ, այլ տեղ չայցելել, քան աշխատանքի վայրը և այլն: Շատ ավելի ճկուն խափանման միջոց է և, կարծում եմ, որ ամենաարդյունավետը նաև հաշվի առնելով այն, որ տնային կալանքը, այնուամենայնիվ, անձի ազատության իրական սահմանափակում է ենթադրում, հենց վարչական հսկողությունը կարող է լինել:

Գործող օրենսդրությամբ /մյուս այլընտրանքայինների համար է ասվում/ բացեր կան, բայց եղ բացերը, կարծում եմ, ոչ թե բացեր, այլ փորձ է արվում իմ կողմից ներկայացված մոտեցումը համատեղելու միջոցները իրացնել: Որովհետև մենք մեր օրենսդրությամբ այս պահին ունենք մեկ խափանման միջոցի արգելք: Օրինակ՝ գրավի պարագայում նշվում է, որ միայն վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ է, որ անձը կարող է լքել Հայաստանի Հանրապետության տարածքը: Ինչը, կարծում ենք, իրավաչափ չէ: Դրա փոխարեն, կարելի էր ուղղակի, ինչու, որովհետև եթե կիրառվել է գրավ, գրավի պայման չէ Հայաստանի Հանրապետության տարածքը չլքելը և դրա փոխարեն կարելի էր ուղղակի նույն միջոցներին հասնել իրավաչափ և սահմանադրական միջոցներով մի այլ միջոց կիրառել, օրինակ, միաժամանակ կիրառել ստորագրություն չհեռանալու մասին: Եվ դա է պատճառը, որ այսօր, օրինակ, մեծ խնդիրներ են առաջանում անձի, այսպես կոչված «Sect» համակարգում նրա հնարավորությունները փակելու, իմ կարծիքով, ոչ իրավաչափ կարծիքա, որը, ըստ էության, սխալ չէ և պետք է իրավաչափ դարձնել իմ կողմից նշված միջոցներով:

Անհրաժեշտ հիմքերը երկար ժամանակի ընթացքում մշակվել է, ինքս էլ Վճռաբեկ դատարանում աշխատելուց դրա հետ որոշակի առնչություն եմ ունեցել, կամաց-կամաց մեր դատական պրակտիկան, կարծում եմ, ճիշտ ուղղությամբ գնաց և նախատեսեց, որ պետք է լինի՝ առաջին՝ հիմնավոր կասկած, երկրորդ՝ հիմքեր, որոնք նախատեսված են քրեական դատավարության օրենսդրությամբ՝ նոր հանցանք չգործել, փախուստի չլինել, չազդել քննության վրա: Երկարացումների ժամանակ դրանց գումարվումա ևս երկու պայման. առաջինը՝ կալանքի ժամանակ վարույթն իրականացող մարմինի պատշաճ ջանասիրությունը և երկրորդը՝ այ էն անհրաժեշտությունը, որ պետք է վարույթը շարունակվի: Էլ ի՞նչ ունի անելու վարույթն իրականացնող մարմինը, որպեսզի վարույթը շարունակվի: Այսքանը, էդտեղ հեծանիվի հարց... Սա միջազգային ստանդարտ է, և մենք կամաց-կամաց մոտենում ենք: Այ, էստեղ խնդիր կա, խնդիր կա Վճռաբեկ դատարանի կողմից հիմնավոր կասկածին տված մեկնաբանությունների մասով: Այն, ինչ 2007-2008թթ. ձևավորվեց, կարծում եմ, ժամանակն է, որ այդ չափանիշը այսօր բարձրացնեն, որովհետև ի սկզբանե խոսվում էր առնչության մասին, անձի առնչությանը հանցանքին, որը շատ ցածր չափանիշ է, որը, կարծում եմ, ժամանակն է՝ մեր օրենսդրությամբ և պրակտիկայում այդ չափանիշը բարձրացվի և ավելի լուրջ հիմնավոր կասկածի հիմքեր նախատեսվեն, քան առնչությունն է:

Ի՞նչ կասեք... կալանքը որպես խափանման միջոց կիրառելու գործելաոճի, ձևավորված ավանդույթների մասին, արդյոք զանգվածային.... /ընդհատում է/

Նախ ես ուզում եմ անհամաձայնություն հայտնել հարցաշարում եղած այդ լայն ձևակերպմանը, որովհետև հաշվարկման մեթոդաբանության խնդիր է սա: Այո՛, իսկապես դատարան ներկայացված միջնորդությունների նույնիսկ 95 տոկոսից ավելին բավարարվում է: Պետք է նաև քննել, թե որքան մեղադրյալների նկատմամբ, ընդհանրապես խափանման միջոց չի կիրառվում, դե դա փոքր թիվ է, և որքան մեղադրյալների նկատմամբ կիրառվում է առանց դատարան դիմելու այլ խափանման

միջոց և ես մի քանի տարի առաջվա վիճակագրությունն եմ հիշում, ամեննին դա կեսից պակաս չէր: Այսինքն՝ կեսից ավել էր, անգամ մի քանի տարի առաջ, կարծում եմ՝ պրակտիկան պետք է փոխված չլինի, ընտրվում էր ստորագրություն չհեռանալու մասին և այլն: Պնդել, որ մեղադրյալների գերակշիռ մեծամասնությունը ենթարկվում է խափանման միջոց կալանքի, կարծում եմ, փաստական սխալ է: Այդ պնդման հիմքում ընկած է գուցե դատական պրակտիկան, բայց մեթոդաբանորեն ճիշտ չէ միայն դատական պրակտիկան հաշվի առնելը, պետք է հաշվի առնել նաև այն դեպքերը, երբ դատարան միջնորդություն չի ներկայացվել, ուղիղ քննիչը կիրառում է ստորագրություն չհեռանալու մասին, երաշխավորություն և այլն: Սա մեկ:

Երկրորդը՝ իսկապես այստեղ ավանդույթներ կան. մենք գտնվում ենք ավանդույթները հաղթահարելու փուլում:

Պատժի նպատակ: Ես չեմ կարծում, որ դա հեշտ որոշվող հարց է: Իրոք, ցանկացած հասարակության մեջ, այն դեպքում, երբ ակնհայտ ապացույցներ են լինում հանցանքի հետ կապված, ընդհանրապես հանրային կարծիքը և առողջ բանականությունը, որը որ իրավական մշակույթի լուրջ կրող չէ, միշտ փորձում է հանցանքը և պատիժը իրար ավելի մոտեցնել, և անգամ խափանման միջոցը համարվում է պատժի դրսևորում: Ես կարծում եմ, որ սա բոլոր տեղերում կա, մեզ մոտ, չեմ կարծում, որ ընդհանուր միջինից տարբերվում է:

Միջնորդությունները հիմնավորված: Ես կարծում եմ, պրակտիկային շատ ծանոթ չեմ: Իմ գործընկերների հետ քննարկումներից եկել եմ այն հետևության, որ այստեղ անհատականացման դրական միտում կա՝ ի տարբերություն 2007-2008թվականների, երբ մենք ունեինք ձևանմուշային, ձևաթղթային իրավիճակ: Այսօր վարույթն իրականացնող մարմինը գիտի, որ նա փաստեր պետք է ներկայացնի և փորձում է այդ փաստերը ձևակերպել: Այսինքն՝ այստեղ դրական միտում կա:

Ի՞նչ տոկոս են կազմում կալանքի միջնորդությունները.....

Ես չեմ ուզում սա որպես կարծիք ներկայացնեմ, որովհետև կան հրապարակված թվեր, կարելի է դա վերցնել: Ես, ճիշտն ասած, էս հարցին չեի ուզենա պատասխանել, որովհետև սա էն հարցն է, որ վիճակագրությունը կարելի է վերցնել: Իմ տպավորությամբ դա կազմում է մոտավորապես 10-ից 9-ը կալանքի էսպես բավարարումները:

Վերադաս մարմինները քանի դեպքից քանիսն է փոփոխության ենթարկում.....

Չէ, դե թվերը կարելի է վիճակագրությունից վերցնել: Հա, իմ ընկալո՞ւմը նկատի ունեք: Իմ ընկալումն այն է, որ վերադաս դատարանը որոշակի ակտիվություն դրսևորում է այս հարցում: Ավելի մեծ ակտիվություն, քան նախկինում: Թվեր չեմ կարող ասել:

Մարդու իրավունքի ոտնահարում չէ՞, կալանքի.....

Ո՞վ է էս հարցերը կազմել: Ես հիմա սա ուղիղ էլ կձևակերպեմ. էս խնդրում եմ այս հարցերը կազմողներին ուշադիր լինեն այս հարցերին: Այս հարցը իրենից ներկայացնում է հարց, որին հնարավոր չէ նորմալ, մասնագիտորեն պատասխանել: Որովհետև ինքնին մեղադրյալի նկատմամբ կալանքի միջնորդությունը, որտեղ է համարվում մարդու իրավունքների խախտում: Մի դեպքում կարող է համարվել՝ կոնկրետ փաստերից ելնելով, մյուս դեպքում՝ ո՛չ: Այս հարցը ամեննին նորմալ ձևակերպված չէ, խնդրում եմ դա արձանագրել:

Ա՛յ, դոնփակի մասին Ձեզ ասեմ, որ էս ունեմ բազմիցս հրապարակավ արտահայտած միանշանակ մոտեցում, որ էստեղ մենք ունենք պրոբլեմ: Ավելին ասեմ, նույն, իմ կողմից մեջբերված քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը այս հարցը լուծել էր: Ես հուսով եմ, որ նախագիծը, որի էս նույն տրամաբանությունը կշարունակվի նաև նոր կառավարության օրոք: Եվ մի բան էլ ավելին ասեմ. էս կարծում եմ, որ գործող սահմանադրությանը արդեն հակասում է այն կարգը, որ նախատեսված է դոնփակությամբ: Ինչին է խոսքը վերաբերում: Արդեն իսկ գործող սահմանադրությունը սահմանում է, որ դատական նիստերը, դատական վարույթները

պետք է դռնբաց լինեն՝ բացառությամբ որոշակի դեպքերի: Այսինքն՝ ընդհանուր բոլոր վարույթներում պետք է լինի դռնբացությունը: Իսկ դռնփակ դատական նիստը պետք է լինի բացառություն, ինչպես մյուս դեպքերում, այնպես էլ կալանքի դեպքում: Այսինքն՝ այսօր որևէ դեպքում հնարավոր չէ դռնբաց դատական նիստ անցկացնել: Պատշաճ կարգավորումը այն կլինի, որ որպես կանոն լինի դռնբաց, բայց կոնկրետ պետական գաղտնիք, անձնական տվյալներ և այլ սահմանադրությամբ նախատեսված հիմքերի առկայության դեպքում հնարավոր լինի վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություն, կամ, ինչու չէ, նաև մեղադրյալի պաշտպանության կողմից միջնորդություն, որ դատարանը կարող է բավարարել և նշանակել դռնփակ դատական նիստ: Ես կարծում եմ, որ, այո՛, տոկոսային առումով, երևի թե, շատ ավելի մեծ տոկոս պետք է լինեն դռնփակ նիստերի ծավալը կալանքի հետ կապված գործերով: Բայց միևնույն է, դա ոչինչ չի փոխում, այսինքն, այսօրվա կարգավորումը համարում եմ, մեղմ ասած, հնացած:

Դռնփակի դեպքում չի՞ խախտվում մեղադրյալի արդար դատաքննության իրավունքը:

Կարելի է սա համարել, ես արդեն ասացի, իմ պատկերացմանմբ, արդեն հակասահմանադրական է այն կարգավորումը, որ կա: Եթե հասնի սահմանադրական դատարան, կարծում եմ, որ սահմանադրական դատարանը կարող է սա հակասահմանադրական ճանաչել, որպես հենց արդար դատաքննության իրավունքի մաս կազմող դռնբացության երաշխիքի խախտում: Էդ առումով, այո՛:

Ի՞նչ իրավական հետևանքներ են առաջացնում մարդուն կալանքի տակ պահելը....

Հենց էդպես էլ գրածա՞: Էս հարցը նույնպես իմ համար անհասկանալի է: Իրավական հետևանքներ ասելով՝ մենք հասկանում ենք օրենքով նախատեսված հետևանքներ են առաջանում, դրանից առաջանում է էն օրենքով նախատեսված հետևանքը, որ առաջին՝ հետազայում այդ հատվածը, եթե մեղադրական դատավճիռ է կայացվում, հաշվի է առնվում պատիժ նշանակվելիս և այլն: Հարցն անհասկանալի է ինձ:

Գրավից բացի ի՞նչ առաջարկություն

Իմ առաջարկությունը, որպես քրեական դատավարության օրենսգրքի նախագծի աշխատանքային խմբի անդամ, ես մեր աշխատանքում եմ նախատեսել: Ես դրա մասին նշել եմ՝ տնային կալանք, վարչական հսկողություն: Այսքանը, այս երկուսը, որ գործուն կարող են լինել, մնացածը: Հա, ի դեպ, նաև որպես խափանման միջոց պետք է լինի պաշտոնավարման, էն ինչ որ այսօր կոչվում է պաշտոնավարման դադարեցում, և էն, ինչ որ նախագծով ձևակերպվել է, որովհետև «Ժամանակավոր դադարեցումը» ճիշտ ձևակերպում չէ, պետք է լինի պաշտոնավարման կասեցում: Դա ևս խափանման միջոց պետք է ձևակերպվի, որովհետև դրա նպատակը ոչ այլ ինչ է, քան որևէ այլ խափանման միջոցի նպատակը, այսինքն՝ պատշաճ վարքագիծը դրսևորելն է: Այդ գործիքը այսօր մեր մոտ կա, բայց չի ձևակերպված որպես խափանման միջոց և մասնագետների խոսքով հենց այդ պատճառով չի ձևակերպված որպես խափանման միջոց, որ անհրաժեշտություն էր առաջացել շրջանցել միայն մեկ խափանման միջոց սկզբունքը: Որովհետև շատ հաճախ է լինում, որ անձի նկատմամբ կիրառված է լինում, օրինակ, պաշտոնավարման ժամանակավոր դադարեցում և ստորագրություն չհեռանալու մասին կամ երաշխավորություն: Եթե այն ձևակերպվեր որպես խափանման միջոց, դա հնարավոր չի լինի:

Անչափահասների նկատմամբ կալանք կիրառելը. . . .

Կան հատուկ կանոններ անչափահասների դեպքում, որ դա կարելի է շատ ավելի լուրջ չափանիշներ կիրառել: Ես կարծում եմ, որ մեր մոտ էստեղ խնդիրներ մենք ունենք: Այս մասով այս պահին պատրաստ չեմ լուրջ հետևություններ անել: Բայց պրակտիկայում, կարծեք թե, իմ տպավորությունն այն է, որ այստեղ ավելի շատ են կիրառում, քան կարող են կիրառել, ես նման տպավորություն ունեմ, կարծում եմ, լուծումներից մեկը, դա կարող եմ ասել, դա խնամակալության, հոգաբարձության մարմիններին պրոֆիլավորելն է նաև այս ուղղությամբ, որպեսզի ընտանեկան, այսինքն՝ ծնողների խնամքին հանձնելը որպես խափանման միջոց իսկապես աշխատի: Այ, դա շատ

ձևական է այսօր: Իսկ այդ դեպքում, կարծում եմ, այստեղ անելիք ունեն նաև խնամակալության և հոգաբարձության մարմինները: Ինչո՞ւ են կալանք կիրառում, որովհետև այլընտրանքային խափանման միջոցը, տվյալ դեպքում, ծնողների հսկողությանը հանձնելը, որը նախագծում դաստիարակչական հսկողության հանձնել է ձևակերպել, կարծես թե առանձնապես չի աշխատում:

ՔԿՀ-ի վիճակի մասին. Հայաստանի պրակտիկային ծանոթ չեմ: Տեղյակ եմ, որ մարդու իրավունքների պաշտպանը բավական ակտիվ այս ուղղությամբ աշխատում է և տեղյակ եմ, որ կան լուրջ դրական տեղաշարժեր:

Կալանավորումը տանո՞ւմ է ժխտման ճանապարհով

Դժվար է ասել: Իրականում մենք տեսնում ենք, որ մեր որոշ վարույթն իրականացնող մարմինները և դա այն հայտնի և տխրահռչակ ձայնագրություններից դուրս եկավ, դեռևս այն տրամաբանության շրջանակներում է, որ կալանքը հաճախ կիրառվում է ոչ այն նպատակներով, որոնք նախատեսված են օրենսդրությամբ, այլ անձին ստիպելու, որպեսզի համագործակցի վարույթն իրականացնող մարմինների հետ: Այս, դեռ խորհրդային ժամանակներից, ենթադրում եմ նաև ավելի վաղ ժամանակներից եկած մտայնություն է, կարծեք թե, դեռևս իր լուրջ դերն ունի մեր որոշ, անգամ բարձրաստիճան պաշտոնական անձանց մտայնության մեջ: Եվ անհրաժեշտ է դրանից ձեռքազատվել, որը հեշտ խնդիր չէ, կարծում եմ:

Գրավի կիրառումը... դրա օրենսդրական ինչպիսի՞ փոփոխություններ են անհրաժեշտ...

Դրա մասին արդեն խոսեցի, որ իմ պատկերացմամբ այդ հնարավորությունը պետք է տրվի վարույթն իրականացնող մարմնին, այլ ոչ թե դատարանին և դատարանն էլ իր հերթին պետք է հնարավորություն ունենա /նաև կալանքի միջնորդություն է հարուցվում/ որոշել, որ այլընտրանք է կիրառվում՝ միայն գրավ, կամ գրավ և այլ միջոցներ, կամ գրավ չլինի և այլ միջոցներ լինի: Օրինակ՝ տեսականորեն պատկերացրեք մեր առաջարկած քրեական օրենսգրքի նախագծով առաջարկված մոդելում կարող է

անձի նկատմամբ կիրառվի և՛ վարչական հսկողություն, օրինակ, նրան արգելվի երեկոյան ժամերին դուրս գալ, միաժամանակ ինչ-որ վայրերում հայտնվել, ինչ-որ մարդկանց հետ շփվել, և՛ գրավ, և՛ երաշխավորություն, և՛ ստորոգրություն չհեռանալու մասին, այն մասով, որ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս չգա: Կարծում եմ, որ շատ դատավորներ, շատ ու շատ հանցագործությունների դեպքում այս ամենը բավարար կհամարեն, որպեսզի անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց չկիրառվի: Եվ գրավը պետք է դիտել ավելի շատ որպես համակարգի մեջ մեկ էլեմենտ: Ես չեմ կարծում, որ գրավը ինքնին միշտ արդյունավետ կարող է դիտվել, այլ նա որպես արդյունավետ այլընտրանքի բաղադրատարր կարող է հանդիսանալ:

Գրավի չափերը ընդունելի՞ են, թե՞

Ես չեմ կարծում, որ հնարավոր է գտնել բանաձև, որտեղ մաթեմատիկական ճշգրտությամբ որոշել դրա իրավաչափությունը: Ես համաձայն եմ այն մոտեցմանը, որ Միացյալ Նահանգներում է ի սկզբանե դրված, կարծում եմ նաև Անգլիայից է վերցվել, որդեգրվել, որ չի կրող գրավի չափն այնպիսին լինի, որը բացարձակ անհամաչափ է անձի հնարավորություններին: Բայց թե դրա տակ ի՞նչ կարելի է հասկանալ, դժվար է ասել, այնուհանդերձ: Դատարանը պետք է էստեղ լայն հայեցողություն ունենա:

Ի՞նչ կուզեիք ասել այս խնդրի մասին, որ ես հարց չտվեցի:

Այն եմ ուզում ասել, որը նաև սկզբից ասեցի, որ այս խնդիրները, իմ պատկերացմամբ, արդեն տարիներ ի վեր մշակված, քրեական դատավարական օրենսգրքի նախագծում մեծ մասամբ տրված են և անհրաժեշտ է ուղղակի քաղաքական կամք դրսևորել մեր պետության համար, որպեսզի այդ նախագիծը վերջնական տեսքի բերել և կիրառության մեջ դնել:

Շնորհակալություն